

2026

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՅԱԿԱՅԱՆ

ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-
Մեղրի մայրուղի 1-2կմ 14 հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՑԱԿԱՅԱՆ

ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի
մայրուղի 1-2կմ 14 հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	6
1.2	Հապավումներ	6
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	7.
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7.
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).....	1 1
1.5.1	Ներկա վիճակի նկարագիր	1 1
1.5.2	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	1.1
1.5.3	Ջրամատակարարում և ջրահեռացում.....	15
1.5.4	Զեռուցում և օդափոխություն.....	16
1.5.5	Կանաչապատման աշխատանքներ	19
1.5.6	Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ.....	19
1.5.7	Աղմուկ և թրթռում:.....	19
1.5.8	Նախատեսվող գործունեության հատակագծեր.....	24
1.5.9	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց	30
1.5.10	Շինհրապարակի հատակագիծ.....	3 1
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ	3 2
2.1	Աշխատանքների կատարման սխեմա	3 3
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են	34
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	34
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	35
2.3.1	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	35
3.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	3 7
3.1	Կլիմայական պայմանները.....	40
3.2	Օդային ավազան	4 1
3.3	Ջրային ռեսուրսներ.....	4 1
3.4	Հողածածկ	43
3.5	Կենսաբազմազանություն	44
3.5.1	Բուսականություն.....	44
3.5.2	Բուսական աշխարհ	44
3.5.3	Կենդանական աշխարհ.....	45
4.6	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	45
4.7	Պատմամշակութային հուշարձանների ցանկ	45

3.6	Թափոնների կառավարում.....	46
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	47
4.1	Շինարարական աշխատանքներ.....	Ошибка! Закладка не определена.
4.1.1	Օդի աղտոտում.....	Ошибка! Закладка не определена.
4.1.2	Աղմուկի և թրթռումների ազդեցություն.....	Ошибка! Закладка не определена.
4.1.3	Ջրօգտագործում և ջրահեռացում.....	Ошибка! Закладка не определена.
4.1.4	Ազդեցությունը հողածածկի վրա.....	Ошибка! Закладка не определена.
4.1.5	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա.....	Ошибка! Закладка не определена.
4.1.6	Շինաղբ.....	Ошибка! Закладка не определена.
4.1.7	Սոցիալական ազդեցությունը.....	Ошибка! Закладка не определена.
4.2	Շահագործման փուլ.....	Ошибка! Закладка не определена.
4.2.1	Օդի աղտոտում.....	Ошибка! Закладка не определена.
4.2.2	Ջրահեռացում.....	Ошибка! Закладка не определена.
4.2.3	Ջրային ռեսուրսների աղտոտում.....	Ошибка! Закладка не определена.
4.2.4	Հողային ռեսուրսների աղտոտում.....	Ошибка! Закладка не определена.
4.2.5	Սոցիալական ազդեցությունը.....	Ошибка! Закладка не определена.
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	53
5.1	Ռիսկերի գնահատում.....	53
5.2	Արտանետումների աղբյուրները.....	53
5.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....	53
5.3.1	Մթնոլորտային օդ.....	53
5.3.2	Ջրային ռեսուրսներ.....	54
5.3.3	Հողային ռեսուրսներ.....	54
5.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	55
5.3.5	Հակահրդեհային միջոցառումներ.....	55
5.3.6	Աղմուկ և թրթռում.....	56
5.3.7	Թափոնների կառավարում.....	56
5.3.8	Տարածքի բարեկարգում կանաչապատում.....	57
5.3.9	Օդերևութաբանական պայմանների դեպքում իրականացվող միջոցառումներ.....	57
6.	ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՅԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	59
6.1	Ընդհանուր դրույթներ.....	59
6.2	Ռիսկերի գնահատում.....	59
6.2.1	Հիմնական վտանգներ.....	59
6.2.2	Ռիսկերի մակարդակի գնահատում.....	60
6.3	Կանխարգելիչ միջոցառումներ.....	60
6.3.1	Տեխնիկական միջոցներ.....	60
6.3.2	Կազմակերպչական միջոցներ.....	60
6.4	Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան.....	60
6.4.1	Պայթյուն / Հրդեհ.....	60
6.5	Երկրաշարժ.....	61

6.6	Սողանք.....	61
6.7	Տարհանման կարգ.....	61
6.8	Պատասխանատվություն.....	61
6.9	Վերահսկում և թարմացում.....	61
6.10	Եզրակացություն.....	61
7.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	
	ՔՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌ ԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	64
	ՇՐՋԱԿԱ ՄԻՋ ԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹ ՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ)	
	ԾՐԱԳԻՐ	Օшибка! Закладка не определена.
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	72
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	73

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	Թ. Սահակյան
Անձնագրային տվյալներ՝	AU0427692, տրվել է 30.08.2021թ., 006-ի կողմից
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2կմ 14 հողամաս
Գնահատման հաշվետվության մշակող՝	Ա/Ձ Արամ Գալոյան ՀՀ ք. Երևան Սևանի փ. 2. 86/2 galoyanaram1985@gmail.com հեռ. +374 99 994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից, միջազգային ստանդարտներին համապատասխան հեղուկ վառելիքի լցակայան:

Հեղուկ վառելիքի լցակայանը նախատեսվում է ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս հասցեում: Հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2014թ./ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի "բ" ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Այնթափ բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս հասցեում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև:

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ- 121 (ընդունված 1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) – սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. – Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ

ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է

շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը ել կհանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու ել հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու ել 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-

րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Հեղուկ վառելիքի լցակայանի համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 12-կմ 14 հողամաս հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 03-012-0264-0008

Մակերեսի չափը (հա)՝ 0.2692

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարածքը ունի մասնակի տեք ռելյեֆ, կառուցապատված չը:

Հարևանությամբ են գտնվում համայնքային և մասնավոր հողատարածքներ, բնակելի տներ:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծային աշխատանքների մշակման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի առաջադրանքը և հետևյալ փաստաթղթերը՝

1. Մասիսի համայնքապետարանի կողմից 20.07.2026թ. տրված N ՆԹ-9263-26 նախագծման թույլտվությունը (Ճարտարապետահատակագծային առաջադրանք),

2. Անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման N 07022025-03-0058 վկայականը,

3. Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին եզրակացությունը,

4. Տեղամասի գեոդեզիական հանույթը

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս հասցեում՝ 0,2692 հա մակերեսով հողամասի վրա, նախատեսվում է կառուցել հեղուկ վառելիքի լիցքավորման կայան: Հողամասի կադաստրային ծածկագիր՝ 03-012-0264-0008:

Հողամասը հարում է Երևան-Մեղրի Մ2 մայրուղուն:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի բոլոր շենքերն ու շինությունները նախատեսվում է տեղակայել մայրուղուց 21,0մ -ից ավելի հեռավորության վրա:

Լիցքավորման կայանի կազմում նախատեսվում է կառուցել ծածկարան, 3 լցավորման աշտարակ կղզյակներով, օպերատորական, վարորդների սպասարկման սրահ, ապաստարան, ինչպես նաև հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարան՝ 1 բաք դիզվառելիք 9.5մ³ և 2 բաք բենզին 9.5մ³, 1 բաք հեղուկ գազ 9.5մ³:

Որպես երեսապատման նյութեր օգտագործված են այլումինե կոմպոզիտային պանելներ:

Լիցքավորման կայանի մուտքն ու ելքը ապահովելու համար նախատեսվում է դանդաղեցման և արագացման գոտիներ և տարանջատող կղզյակ :

Շենքերն ու շինությունները տեղակայված են պահպանելով նորմատիվային հեռավորությունները միմյանցից և հարևան շինություններից:

Ցուցանիշներ՝

Հողատարածքի մակերես՝ -----2692.0 մ²

Կառուցապատման մակերես՝ -----230.6 մ² (8.6 %)

Կանաչապատման մակերես՝ -----1378.25 մ² (51.2 %)

Ասֆալտի մակերես՝ -----889.4 մ² (33 %)

Մայթ, սալվացք՝ -----193.4 մ² (7.2 %)

Համաձայն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ 22 մայիսի 2023 թվականի N 04-Ն հրամանի Հեղուկ վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններով ԱՀՎԼԿ-ի հեռավորությունները մինչև մանկական նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, ստացիոնար բուժական հիմնարկների հողամասերի սահմանները կամ բնակելի և հասարակական շենքերի պատերը պետք է ընդունել 50մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունը պետք է որոշել բաշխիչ կետերից և վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է խոտածածկի տեսքով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա

կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Տեխնոլոգիական մաս

Նախագծով նախատեսվում է ստորգետնյա հեղուկ գազի լիցքավորման գազամբարի տեղադրում 9.5 մ^3 ծավալով պոմպով, հեղուկ վառելիքի տարաների /բաքերի/ տեղադրում դիզել - 9.5 մ^3 - 1 հատ: Բենզին 9.5 մ^3 - 2 հատ, 1 բաք հեղուկ գազ 9.5 մ^3 : Տարաները տեղադրվում են մեկ հարթակի վրա հողի մակերեսից խորության վրա: Ռեգերվուարների սարքավորումները մոնտաժվում են մետաղական հորի մեջ, որը ծածկվում է մետաղական կափարիչով: Ռեգերվուարները կոռոզիայից պաշտպանելու համար, ներկվում են հակակոռոզիոն ներկով: Ռեգերվուարները վառելիքով լիցքավորվում են անմիջապես ավտոգիստեռնից լիցքավորման տեղամասի միջոցով: Վառելիքը ռեգերվուարներից տրվում է պոմպի միջոցով, որը տեղադրված է վառելիքաբաշխիչների մեջ: Արտաձման խողովակի ներքևի մասում տեղադրված է հետադարձ ընդունող կափույր:

Ռեգերվուարները կրակից պաշտպանելու համար նախատեսված են կրակի ապահովիչներ: ԳԼ կայանների տարածքը անհրաժեշտ է ցանկապատել: Ցանկապատը պետք է պատրաստված լինի չիրկիզվող նյութերից և ապահովի տարածքի օդափոխությունը: ԳԼ կայանների ներհրապարակային ճանապարհների տրանսպորտային շինությունները /անցատեղերը, անցուղիները և այլն/ պետք է պատրաստվեն չիրկիզվող նյութերից: ԱԳԼԿ կայանների տարածքները պետք է ունենան պահպանական/պահակային լուսավորում: ԳԼ կայանների տարածքը պետք է լինի մաքուր: Անցուղիները և անցումները պետք է լինեն ազատ: Կայանների տարածքում արգելվում է ԳԼ կայանների արտադրական գործընթացներին ոչ պիտանի նյութերի պահեստավորումը և պահպանումը: Ստորգետնյա ռեգերվուարներ են համարվում այն ռեգերվուարները, որոնց վերին եզրը գտնվում է հարակից տարածքի նախագծային նշագծից առնվազն $0,2 \text{ մ}$ ցածր: Ստորգետնյա ռեգերվուարներին են հավասարվում այն արտաքին ռեգերվուարները, որոնք լցածածկվում են գրունտով վերին եզրից հաշված առնվազն $0,2 \text{ մ}$ բարձրության վրա, իսկ լայնքով՝ ռեգերվուարի պատից հաշվելով 6 մ հեռավորության վրա: Արտաքին ռեգերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեգերվուարի տրամագծից ոչ պակաս, իսկ եթե դրանց տրամագիծը 2 մ -ից պակաս է, ապա առնվազն 2 մ : Ստորգետնյա ռեգերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեգերվուարի տրամագծի կեսից ոչ պակաս, բայց առնվազն 1 մ : Ստորգետնյա ռեգերվուարի անջատող սարքավորումները, ապահովիչ կափույրները և հսկիչ-չափիչ սարքերը պետք է գտնվեն գետնի /լցածածկի/ մակերեսից բարձր: Ստորգետնյա և վերգետնյա հեղուկ գազերի ռեգերվուարները պետք է սարքավորվեն հեղուկի մակարդակի ցուցիչներով, մանոմետրերով և ապահովիչ կափույրներով: Բացի այդ, վերգետնյա ռեգերվուարները պետք է սարքավորվեն նաև չսառչող ճնշակարգավորիչ կափույրով: Ռեգերվուարի վրա պետք է տեղադրվեն առնվազն երկու ճնշաթափման ապահովիչ կափույրներ: Դրանցից առաջ պետք է տեղադրված լինի հատուկ եռաքայլ ծորակ, որը թույլ կտա անջատել երկու կափույրներից որևէ մեկը: Գազի հեռացումը ապահովիչ կափույրներից պետք է իրականացվի մոմերի միջոցով: Ապահովիչ կափույրների փչամաքրման մոմերի վրա անջատող սարքերի տեղադրումը արգելվում է: Թույլատրվում է մի քանի ապահովիչ կափույրների միացումը մեկ փչամաքրման մոմին: Փչամաքրման մոմերի բարձրությունը ռեգերվուարի համեմատ պետք է լինի 3 մ -ից ոչ պակաս՝ վերգետնյա ռեգերվուարների համար այդ հեռավորությունը հաշվառվում է սպասարկման հրապարակի

մակերեսից, իսկ ստորգետնյա ռեզերվուարների համար՝ լցածածկի մակարդակից: Շենքից դուրս տեղադրված փչամաքրման մոմերի բարձրությունը գազատարների և սարքավորումների համեմատ պետք է լինի 3 մ-ից ոչ պակաս՝ հաշվելով միացման տեղից: Բաց տիպի մակարդակաչափային ապակիներով հեղուկի մակարդակի ցուցիչները պետք է հաշվարկված լինեն առնվազն 1,8 ՄՊա ճնշման համար, ունենան արագագործ կափույրներ, անջատող ծորակներ և պաշտպանված լինեն վնասվելուց:

Ջեռուցող սարքավորումներ թույլատրվում է տեղադրել ինչպես ռեզերվուարների ներսում, այնպես էլ դրսից, այն պայմանով, որ դա չառաջացնի ռեզերվուարի ներքին ճնշման հաշվարկային ցուցանիշներից բարձր աճ: Արևի ճառագայթից վերգետնյա ռեզերվուարների տաքացումը բացառելու համար դրանք ներկվում են բաց գույնի ներկով /անհրաժեշտության դեպքում, բայց ոչ պակաս 5 տարին մեկ անգամ/ կամ սարքավորվում են ջերմային պատյանով, կամ տեղադրվում են չիրկիզվող նյութերից պատրաստված ծածկարանների տակ: Ստորգետնյա ռեզերվուարները պետք է պաշտպանված լինեն կոռոզիայից՝ համաձայն սահմանված նորմերի պահանջների: Արգելվում է ԳԼ կայանների տարածքով օդային էլեկտրահաղորդակցման գծերի անցկացումը: Պահպանման բազայի տարածքի սահմաններում մալուխային գծեր թույլատրվում է անցկացնել միայն դեպի հսկիչ-չափիչ սարքերը և ավտոմատ սարքավորումները, որոնք անհրաժեշտ են ռեզերվուարի շահագործման համար: Պահպանման բազայի տարածքում տեղադրված բոլոր հսկիչ-չափիչ սարքերը և ավտոմատ սարքավորումները պետք է լինեն պայթյունապաշտպանված կատարմամբ: Տեղադրվող սարքավորումները և սարքերը պետք է համապատասխանեն տարածքների պայթյունահրդեհավտանգվորության պահանջներին, ինչը սահմանվում է ստանդարտներով: ԳԼ կայանների գազատարներով հեղուկ գազերի հեղուկ և գազանման ֆազերի տեղափոխման համար կիրառվող ճնշիչները և պոմպերը պետք է լինեն հատուկ կատարմամբ և պիտանի պրոպան-բութանային չափամասերի վերամղման համար: Մեկ շարքով երկու և ավելի պոմպերի կամ ճնշիչների տեղադրման դեպքում անհրաժեշտ է նախատեսել սպասարկման ճակատով հիմնական անցումի առնվազն 1,5 մ լայնք, պոմպերի միջև նվազագույնը 0,8 մ հեռավորություն, ճնշիչների միջև՝ 1,5 մ, ճնշիչների և պոմպերի միջև՝ 1,0 մ, և պոմպերից ու ճնշիչներից մինչև սենքի պատերը՝ առնվազն 1,0 մ հեռավորություն: Պոմպերի և ճնշիչների ներծծող և արտամղող խողովակաշարերի վրա պետք է տեղադրվեն անջատող սարքեր, իսկ արտամղող խողովակաշարերի վրա՝ նաև հետադարձ կափույրներ: Պոմպերից առաջ պետք է տեղադրված լինեն փչամաքրման մոմերով գտիչներ/ֆիլտրեր, պոմպերից հետո արտամղիչ գազատարների վրա՝ փչամաքրման մոմեր, որոնք կարող են միացվել գտիչների/ֆիլտրերի մոմերի հետ: Միացավոր և մրրիկային պոմպերի կուտակիչները պետք է սարքավորված լինեն դիֆերենցիալ կափույրներով, որոնք միացվում են ռեզերվուարների խողովակաշարի հետ տարաթողման գծով: Ներծծող գծերի վրա ճնշիչներից առաջ տեղադրվում են փչամաքրման սարքավորումներով հեղուկի գատիչներ, իսկ արտամղող գծերի վրա՝ յուղազատիչներ: Ճնշիչները և պոմպերը պետք է սարքավորված լինեն դրանց նորմալ աշխատանքը ապահովող չափանիշների խախտման դեպքում և, անհրաժեշտության դեպքում, նաև գատիչներում հեղուկի մակարդակի բարձրացման դեպքում էլեկտրաշարժիչները անջատող ավտոմատ համակարգով: Սեպափոկային փոխանցումներում պետք է օգտագործվեն ԳՕՍՍ 1284.2-89-ի պահանջներին համապատասխանող սեպաձև փոկերը:

Կոմպրեսորի սարքավորումների բոլոր այն մետաղյա մասերը, որոնք աշխատանքի ժամանակ կարող են հայտնվել լարման տակ /հենցը, էլեկտրաշարժիչների

կորպուսները/հենամարմինները, պահարանները, կառավարման վահանակները և այլն/պետք է լինեն հողակցված: Բոլոր փոկային փոխանցումների մեկուսացումը պետք է տեղադրել փոկերից առնվազն 20 սմ հեռավորության վրա: Լցավորման բաժանմունքի դասավորումը/կազմավորումը պետք է բացառի բալոնների լիցքավորման կայանին ավտոմոբիլային տրանսպորտի 5 մ-ից ավելի մոտենալու հնարավորությունը: ԳԼ կայանների բոլոր փակ պայթյունավտանգավոր սենքերը պետք է սարքավորված լինեն մեխանիկական ներծծիչ-արտածծիչ օդափոխման համակարգով, որը կապահովի աշխատանքի ժամանակ 1 ժամվա ընթացքում առնվազն տասնապատիկ օդափոխանակումը, իսկ ոչ աշխատանքային ժամերին 1 ժամվա ընթացքում՝ եռապատիկ օդափոխանակում: Ոչ աշխատանքային ժամերին իրականացվող օդափոխումը կարող է լինել մեխանիկական, բնական կամ խառը: Ճնշիչ պոմպակայանը բացի ներծծիչ-արտածծիչ օդափոխման համակարգի պետք է ունենա նաև վթարային օդափոխման համակարգ: Արտածծիչ համակարգերի օդամղիչները պետք է այնպես համակցված լինեն պայթյունավտանգավոր սենքերում տեղադրված ճնշիչների և պոմպերի էլեկտրահաղորդակներով հետ, որ բացառվի դրանց աշխատանքի հնարավորությունը օդափոխման համակարգի անջատման դեպքում: Հեղուկ գազերի գազատարները պետք է ներկվեն պայմանական գույների յուղաներկով. գազանման ֆազի գազատարները՝ դեղին գույնի լայնական կարմիր օղակներով, հեղուկ ֆազի գազատարները՝ շագանակագույն, լայնական կարմիր օղակներով: Հեղուկ ֆազի վերգետնյա արտաքին գազատարները պետք է ներկվեն արևի ճառագայթները անդրադարձնող բաց գույնի ներկերով՝ առանձին հատվածների ազդանշանային ներկվածքով՝ ԳՕՍՍ 14202-69 ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան: Դատարկման-լիցքավորման սարքավորումների համար պետք է կիրառվեն 1,6 ՄՊա-ից ոչ պակաս աշխատանքային ճնշման համար նախատեսված Բ ,րե դասի ռետինագործվածքային խողովակները կամ այլ խողովակները, որոնց տեխնիկական հատկությունները պակաս չեն Բ ,րե դասի խողովակների հատկություններից /ԳՕՍՍ 18698-79/: Ռետինագործվածքային խողովակները արգելվում է օգտագործել որպես մնայուն գազատար: Ռետինագործվածքային խողովակի եզրերը պետք է ունենան հատուկ սարքավորումներ գազատարների և այլ անոթների խողովակակապուկներին միանալու համար: Ռետինագործվածքային խողովակները պետք է լինեն շրջափակված 2 մմ և ավելի տրամագծով պղնձե լարերով կամ 4 մմ-ից ոչ պակաս կտրվածքով պղնձե ճոպանով՝ 100 մմ-ից ոչ պակաս պտույտի քայլով: Մետաղալարի երկու եզրերը միացվում են խողովակի եզրամասի հետ զոդումով կամ հեղույսի տակ Պահեստային շինությունում օդի ջերմաստիճանը չպետք է լինի 50C ցածր և 30C բարձր, օդի հարաբերական խոնավությունը՝ 80% ոչ ավելի, օրվա ընթացքում ջերմաստիճանը 10C-ից չպետք է տատանվի:

1.5.3 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք Այնթափ գյուղ Երևան - Մեղրի մայրուղի 12-կմ 14 հողամաս հասցեում նախատեսվող հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի ջրամատակարարման – կոյուղու նախագիծն իրականացված է համաձայն պատվերին – գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Լիցքավորման կայանի շրջակայքում տեղադրվում են են թվով 2 հատ հիդրանտներ, Նախագծում նախատեսված է ներքին ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ Փ25 տրամագծով պոլիէթիլենային խողովակներով: Ջրագծի ելակետային աղբյուր է հանդիսանում ջրի գոյություն ունեցող գործող պոլիէթիլենային ջրագիծը: Միացումն իրականացվում է պոլիէթիլենային գոտի-անցումների միջոցով:

Մուտքագծի վրա նախատեսված է տեղադրել $\Phi 70$ փական: Սանհանգույցների ներքին ջրամատակարարումն իրականացվում է պոլիպրոպիլենային $\Phi 25-20$ խողովակներով, իսկ հրդեհային ջրագծերը իրականացվում են $\Phi 50$ խողովակներով:

Ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա եղանակով, իսկ արտաքին $\Phi 25 - 32$ խողովակները իրականացվում է ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային HDPE խողովակներով:

Արտաքին ջրագիծը նախատեսված է իրականացնել 1.2մ խորությամբ: Սանիտարական սարքավորումներից կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը հեռանում են նախատեսված կանգնակների միջոցով, որոնք էլ միանալով իրար լցվում են տարածքում նախատեսված մաքրման կայանի մեջ:

Կոյուղագծի ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա եղանակով պոլիվինիլքլորիդե $\Phi 110 - 50$ խողովակներով, իսկ արտաքին կոյուղագծերը մոնտաժվում են ստորգետնյա եղանակով պոլիվինիլքլորիդե PVC $\Phi 160$ խողովակներով: Կոյուղու խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերում, որոնցով անցնում են խողովակները տեղադրել պողպատե պաշտպանիչ պատյաններ – լցնել չայրվող էլաստիկ նյութով:

Ջրագծի – կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատաս - խան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3.05.01-85:

Հեղեղատար վաքերի և տեխնոլոգիական մասից ջրահեռացման համար նախատեսել յուղորսիչներ:

Հողային բոլոր աշխատանքներն իրականացնել այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները:

1.5.4 Մաքրման կայան

Որպես կեղտաջրերի մաքրման կայան ընտրվել է Biobox Standart տեսակի կենսաբանական մաքրման կայանը: Պատրաստված է բարձրորակ, առաջնային պոլիպրոպիլենից, հագեցած է օդափոխիչ տարրերով և 100% վերացնում է հոտը: Ունի 98% - ֆիլտրացման համակարգ:

Մաքրման կայանից դուրս եկող մաքուր ջուրը կօգտագործվի տարածքի ոռոգման և ջրցանի համար, նաև հնարավոր է իրականացնել կրկնակի օգտագործում կոմունալ կենցաղային նպատակների համար:

1.5.5 Ջեռուցում և օդափոխություն

ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք Այնթափ բնակավայրի Երևան - Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի օդափոխության համակարգի աշխատանքների նախագիծը իրականացված է գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան: Նախագծով նախատեսվում է օդափոխությունն իրականացնել օդամուղ և օդահեռ համակարգի միջոցով՝ օդափոխության Φ

160 և Φ 110 խողովակների միջոցով: Նախատեսվում է տեղադրել օդամուղ-օդահեռ օդափոխության համակարգ՝ ռեկուպիրատորներ^ա 1000մա/ժ- 3.58կվտ և 250մա/ժ-2.6 կվտ հզորությամբ, որն էլ. սենքերի և սանհանգույցի օդը օդահեռ խողովակների միջոցով դուրս է մղում և դրսից օդամուղ խողովակների միջոցով օդ է մղում դեպի սենքեր: Օդահեռ խողովակները հանգուցվում են և միացվում ռեկուպիրատորների օդահեռ համակարգին: Իսկ օդամուղ խողովակները ռեկուպիրատորներից դուրս են գալիս և իջնելով մինչև առաստաղի նիշ բաժանվում են համապատասխան տեղամասերի: Օդահեռ և օդամուղ խողովակները նախատեսվում է իջեցնել մինչև առաստաղի նիշը և տեղադրել դեկորատիվ ցանցեր:

1.5.6 Շանթապաշտպանություն

Տեղանքի շանթապաշտպանությունը նախատեսվում է իրականացնել երեք շանթարգելներով: Հաշվարկները կատարված են համաձայն 34.21.122-87 « Շենքերի կառույցների կայծակապաշտպանության սարքավորումներ » հրահանգի, ՀՀ տարածքում գործող այլ նորմերի ու կանոնների:

Ընդունված է 24.0մ բարձրությամբ շանթարգել, կառուցված տարբեր տրամաչափի մետաղականխողովակներից, շանթարգելը հիմքը ունի 2մ խորություն ամրացվում է Բ 15 մակնիշի բետոնով: Լցակայանի երթևեկելի մասով անցնող էլեկտրասնուցման ստորգետնյա մալուխագծերը անհրաժեշտ է անցկացնել Φ 100 մմ ՊՎՔ խողովակով մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու համար: Նախատեսվում է կառուցել հողանցման օջախպես հորիզոնական հողանցիչ նախատեսվում է 40 x 4 տիպի շերտապողպատ, իսկ ուղղահայաց հողանցիչ՝ 2.5 մ երկարությամբ 50x50x5 մմ չափի անկյունակ, որոնց թիվը կարող է փոփոխվել կախված հողանցման կոնտուրի չափումների արդյունքներից : Անհրաժեշտության դեպիարկավոր է ավելացնել ուղղահայաց հողանցիչների թիվը, ապահովելով հողանցման նորմատիվային պահանջները: Հողանցման օջախի 40 x 4 տիպի շերտապողպատմիանում են տարածքում առկա, լարման տակ չգտնվող բոլոր մետաղական ստրուկցիաները, այդ թվում նա- գազի մետաղական կուտակիչներին:

Նախագիծը մշակված է գործող շինարարական նորմերի ու կանոնների պահանջների համապատասխան և նախատեսվում են հրդեհաանվտանգության և պայթյունաանվտանգության միջոցառումներ:

1.5.7 Էլեկտրամատակարարում

Համաձայն ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների հեղուկ վառելիքի լցակայանի էլեկտրամատակարարման ահամը նախատեսվում է՝

- Տարածքի էլեկտրամատակարարման իրականացման նպատակով, վերը նշված հասցեում տեղադրել 400 կՎԱ հզորության 10/0.4 կՎ ենթակայան (ԳՕՍՍ-11920-85, ԳՕՍՍ-14695-85)
- Ենթակայանի սնումն իրականացնել «Խարբերդ» 110/10 կՎ ե/կ-ի «գ.Այնթափ» 10կՎ օդային գծի թիվ 67 հենարանից՝ ճյուղավորումով, կառուցելով մոտ 30մ 10կՎ օդային գիծ:
- Ճյուղավորման առաջին հենարանին տեղադրել 10 կՎ լարման գծային բաժանիչ:
- Սահմանազատման կետում՝ ե/կ-ը սնող 10 կՎ ճյուղավորման սկզբում, տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր (տեղակայել հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորներ, բացառությամբ էլեկտրոնային առևտրային հաշվիչի, որը տեղադրվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից):

Էլ.մատակարարման նախագիծը՝ նախապես համաձայնեցնել «Արաքս» մասնաձյուղի գլխավոր ճարտարագետի, «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի, համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Համաձայն էլեկտրամատակարարման նախագծի նախատեսվում է կազմակերպել լիցքավորման կայանի սենքերի, ծածկարանի, լցավորման կետերի էլեկտրամատակարարումը, ինչպես նաև տեղադրել մինչև 100 կՎտ հզորության լիցքավորման կետ էլեկտրամոբիլների լիցքավորման համար: Էլեկտրաէներգիայի ընդունումը և բաշխումը կատարվում է 10/0,4 կՎ տրանսֆորմատորային ենթակայանի 0,4 կՎ լարման ԲՎ-ից, ապահովելով Վարչական շենքի Բաշխիչ Վահանի և էլեկտրամոբիլների լիցքավորման կայանի էլեկտրասնուցումը: Օպերատորական շենքի սենքերի էլեկտրամատակարարումն իրականացվում է էլեկտրավահանակների սենքում տեղադրված Բաշխիչ Վահանից, որտեղ նախատեսվում է տեղադրել 100Ա հոսանքով մուտքային եռաֆազ ավտոմատ անջատիչ և 32 Ա, 25Ա ու 16 Ա միաֆազ հոսանքով ելքային ավտոմատ անջատիչներ սենքերի համար կարճ միացման հոսանքներից և գերբեռնումներից պաշտպանելու նպատակով:

Օդափոխության սարքավորումների էլեկտրասնուցումն իրականացվում է համաձայն դրանց տեխնիկական անձնագրերում նշված պայմանների: Սպառիչների էլեկտրասնուցումը նախատեսվում է իրականացնել 0,4կՎ լարման ВВГнг(У)-пс-660 մակնիշի մալուխով: Սնող մալուխների կտրվածքներն ընտրված են համաձայն հոսանքի թույլատրելի մեծության և ստուգված է լարման անկման թույլատրելի չափով:

Մալուխային մասնագիրը չի կարող հանդիսանալ մալուխները կտրելու հիմք: Մալուխները կտրվում են փաստացի չափած ուղեգծի երկարությամբ:

Էլեկտրական լուսավորություն Ընդհանուր լուսավորության ցանցի լարումը 220 Վ: Սարքավորումների և սպասարկող անձնակազմի պաշտպանության համար նախատեսվում է բաշխիչ վահանը հաղորդալարով միացնել հողանցման կոնտուրին: Լուսավորության ցանցը նույնպես նախատեսված է մոնտաժել եռաջիղ հաղորդալարով, որի մեկ հաղորդալարը օգտագործել հողանցման համար:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն ԷՄԿ-ի СНиП 3.05.06-85 և ՀՕ 102-76 պահանջների:

1.5.8 Հրդեհի ինքնավար ազդարարման համակարգ

Հակահրդեհային համակարգի ինքնավար ազդասարքերը նախատեսված են հսկվող շինությունում հրդեհի հայտնաբերման - անձնակազմին ու համապատասխան ծառայություններին տեղեկացնելու համար: Նախատեսվում է տեղադրել ծխային ինքնավար, ինչպես նաև՝ ձեռքի հրդեհային ազդասարքեր: Վերջինների տեսակն ու քանակն ընտրված են ըստ մակերեսի, շինության նշանակության - հրդեհավտանգության աստիճանի: Ծխի հայտնաբերման ինքնավար ազդասարքերը տեղադրվում են պաշտպանվող շինության առաստաղին՝ ընդ որում այնպես, որ գտնվեն հեռու՝ լուսատուներից 0.5 մ, օդանցքներից 1 մ, իսկ առավելագույն հեռավորությունը պատերից՝ 4.5 մ, միմյանցից՝ 9 մ: Ձեռքով գործարկման ազդասարքերը տեղադրվում են պատերին՝ հատակից 1.5 մ բարձրության վրա:

Անձնակազմի տեղեկացման համար միջանցքներում - սպասասրահում տեղադրվում են ներքին ձայնային ազդարարման սարքեր (շչակ), իսկ մուտքի մոտ՝ լուսաձայնային ազդարարման արտաքին սարք: Ազդանշանների ստացման, վերլուծման, հասցեավորման,

ինչպես նա– GSM կապի միջոցով համապատասխան մարմիններին տեղեկացնելու համար օպերատորային սենյակում տեղադրվում է 8 տեղանոց ընդունիչ-հսկիչ պանել՝ GSM կապի մոդուլով: Արտաքին էլեկտրամատակարարման ընդհատման դեպքում համակարգի անխափան աշխատանքի համար նախատեսված է 2 հատ անընդհատ սնուցման բլոկներ (ակումյատորային մարտկոց): Ազդասարքերի - շյակների սնուցումն իրականացվում է հսկիչ պանելից՝ կրակ չտարածող – սակավածուխ մեկուսացումով պղնձե մալուխների միջոցով, համապատասխանաբար՝ FRLS 2x2x0.22 ք.մմ - FRLS 2x0.5 ք.մմ տիպի - կտրվածքով: Մալուխներն անց են կացվում փակ՝ սվաղի տակ:

Էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել խստիվ կերպով պահպանելով «Տեխնիկական կանոնակարգ»-ի – գործող այլ հրահանգների ու նորմերի պահանջները:

1.5.9 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել գազոնի տեսքով և տարածաշրջանին բնորոշ բուսականությամբ:

Նախատեսվում է կազմակերպված կաթիլային ոռոգման համակարգ: Կանաչապատ տարածքների ոռոգման ընկերությունը կդիմի լիազորված մարմնին, համապատասխան ջրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

1.5.10 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 1378.25 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 1378.25) \times 2 \times 175 = 2894.325 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.11 *Աղմուկ և թրթռում:*

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի

չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում աշխատանքների իրականացնելիս շինարարական տեխնիկայի աշխատանքը: Հաշվարկը ատված է ենթադրելով, որ բոլոր շին.տեխնիկան շահագործվում է միաժամանակ՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Համաձայն ՄՆ N 2-III-11.3 սանիտարական նորմերի՝ բնակելի կառուցապատման տարածքների համար ցերեկային ժամերին (ժամը 07:00-23:00) աղմուկի թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **55 դԲԱ** (իսկ էկվիվալենտայինը՝ 45 դԲԱ):

Ստորև ներկայացված է շինարարական տեխնիկայի միաժամանակյա աշխատանքից առաջացող աղմուկի հաշվարկը աղբյուրից $r = 50 \text{ մ}$ հեռավորության վրա:

1. Ելակետային տվյալներ (Աղմուկի մակարդակներն աղբյուրի մոտ)

Ըստ տեխնիկական բնութագրերի և նմանատիպ հաշվարկներում ընդունված ուղեցույցների՝ յուրաքանչյուր տեխնիկայի աղմուկի էկվիվալենտային մակարդակը 1 մ հեռավորության վրա (L_{p0}) հետևյալն է.

- Ավտոկռունկ (KC-55744) (1 հատ)՝ $L_1 = 80$ դԲԱ
- Ինքնաթափ ավտոմեքենա (KAMA3 55111) (2 հատ)՝ $L_2 = 82$ դԲԱ յուրաքանչյուրը
- Էքսկավատոր (JCB-4CX) (1 հատ)՝ $L_3 = 81$ դԲԱ
- Բեռնատար (Kamaz 65116) (1 հատ)՝ $L_4 = 80$ դԲԱ
- Էլեկտրական եռակցման սարք (CTH 500) (1 հատ)՝ $L_5 = 65$ դԲԱ
- Շարժական կոմպրեսոր (ЗИФ 55В) (1 հատ)՝ $L_6 = 75$ դԲԱ

2. Աղմուկի գումարային մակարդակը սկզբնաղբյուրում ($L_{\Sigma 0}$)

Քանի որ աղմուկի աղբյուրները մի քանիսն են, դրանց գումարումը կատարվում է լոգարիթմական եղանակով՝ հետևյալ բանաձևով.

$$L_{\Sigma 0} = 10 \cdot \lg \left(\sum_{i=1}^n 10^{0.1 \cdot L_i} \right)$$

$$\sum 10^{0.1 \cdot L_i} = 10^{8.0} + 2 \cdot 10^{8.2} + 10^{8.1} + 10^{8.0} + 10^{6.5} + 10^{7.5}$$

$$\sum 10^{0.1 \cdot L_i} = 10^8 + 2 \cdot (1.58 \cdot 10^8) + 1.26 \cdot 10^8 + 10^8 + 3.16 \cdot 10^6 + 3.16 \cdot 10^7$$

$$\sum 10^{0.1 \cdot L_i} \approx (1 + 3.16 + 1.26 + 1 + 0.03 + 0.32) \cdot 10^8 \approx 6.77 \cdot 10^8$$

$$L_{\Sigma 0} = 10 \cdot \lg(6.77 \cdot 10^8) \approx 88.3 \text{ դԲԱ}$$

Տեղադրելով արժեքները (հաշվի առնելով, որ ինքնաթափը 2 հատ է).

Շինհրապարակի ընդհանուր գումարային աղմուկի մակարդակն աղբյուրների մոտ կազմում է մոտ **88.3 դԲԱ**:

3. Աղմուկի հաշվարկը 50 մ հեռավորության վրա (L_r)

Տարածության մեջ ձայնային ալիքի տարածման և մարման հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$L_r = L_{\Sigma 0} - 20 \cdot \lg \left(\frac{r}{r_0} \right) - \Delta L_a - \Delta L_e$$

Որտեղ՝

- $r = 50$ մ (հեռավորությունը մինչև բնակելի կառուցապատման սահման),
- $r_0 = 1$ մ (սկզբնական հեռավորությունը),
- $20 \lg(50/1) \approx 34.0$ դԲԱ (աղմուկի նվազումը տարածության հաշվին),

- $\Delta L_a = \alpha \cdot \frac{r}{1000}$ ՝ օդում ձայնի կլանման գործակիցն է (ոչ մեծ հեռավորությունների դեպքում կարելի է ընդունել անտեսելի կամ մոտ 0.3 դԲԱ,

- ΔL_e ՝ կանաչապատման, հողաթմբերի կամ տարածքի ցանկապատի հաշվին լրացուցիչ մարումն է:
- Շինհրապարակի ստանդարտ խուլ ցանկապատի առկայության դեպքում էկրանավորման էֆեկտը կազմում է նվազագույնը **10 դԲԱ**:

Կատարենք հաշվարկը.

1. Առանց պաշտպանիչ միջոցառումների (ազատ տարածում)՝

$$L_{r1} = 88.3 - 34.0 = 54.3 \text{ դԲԱ}$$

(Սա արդեն իսկ փոքր է սահմանային թույլատրելի 55դԲԱ -ից, սակայն շատ մոտ է սահմանին):

2. Շինհրապարակի պարագծով ստանդարտ ցանկապատի (էկրանի) կիրառմամբ՝

$$L_{r2} = 88.3 - 34.0 - 0.3 - 10 \approx 44 \text{ դԲԱ}$$

Եզրակացություն

50 մ հեռավորության վրա նշված տեխնիկայի միաժամանակյա աշխատանքից սպասվող աղմուկի էկվիվալենտային մակարդակը կազմելու է **44 դԲԱ**, ինչը լիովին **չի գերազանցում ՄՆ N 2-III-11.3** նորմերով սահմանված ցերեկային ժամերի թույլատրելի սահմանը 55դԲԱ:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:


Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				


Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:


Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ակիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

1.5.12 Նախատեսվող գործունեության հատակագծեր



25





ՆԱԽԱԳԾՈՐ՝
"ՊՐՈՖԵՆԵՐԳԻ" ՍՊԸ
ԷԼ. ՀԱՍՑԵ.՝ info@profenergy.am
ՀԵՌ.՝ (012)771717
ՀԱՍՑԵ.՝ ԵՐԵՎԱՆ, ՏԵՐԶԱՆ 91
ՊԵՏԱԿԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ՝
ԲԴԼ-002534
ՊԱՏԿԻՐԱՏՈՐ՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ
ԱԼԵՔՍԵՅԻ
ՆԱԽԱԳԾԻ ՄԵՎՈՐՈՒՄԸ՝
ՀԱՅ ԵՎ ՀԵՐՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ
ԼԻԶԵՆԿՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՅՈՒՄ
ՀԱՍՑԵ՝
ՄԱՐԶ ՄԱՐԱՏ, ՀԱՄԱՅՆՔ
ՄԱՍԻՆ ԳՅՈՒՂ ԱՅՆԹՈՓ
ԵՐԵՎԱՆ-ՄԵՐՈՒՐԻ ՄԱՅՐՈՒՐԻ
1-24 14 ՀՈՂԱՄԱՍ

ԳԼՆ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
Լ ՈՒՄԵՐԱՅԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
Ռ. ՄԻՍՈՆՅԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
ԱԼՔՈՍ 1
Թերթի անվանում՝
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ
ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ: 1 : 2000
Թերթ 4
Թերթեր 28
ՄԱՍ ԾԱ

ՏՈՒՍ

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 12 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրա ժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երբ ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղխային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամբողջ շինարարության ընթացքում իրականացվելու են միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ռոտզման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Գնահատման հաշվետվությունի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են

Բենզալցկայանի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ՝

Nn/n	Անվանում	Մակնիշ	Զան.	Ծանոթություն
1	Ավտովերամբարձ կռունկ	KC-55744	1	կամ համարժեք
2	Ինքնաթափ ավտոմոբիլ	KAMA3 55111	2	կամ համարժեք
3	Էքսկավատոր	JCB-4CX	1	կամ համարժեք
4	Բեռնատար(автомобиль)	Kamaz 65116	1	կամ համարժեք
5	Էլ. եռակցման սարք	CTH 500	1	կամ համարժեք
6	Շարժական կոմպրեսոր	ЗИФ 55В	1	կամ համարժեք

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ /գրունտ/՝ 1300մ³

Հետլիցք և տարածքի հարթեցում /գրունտ/՝ 600 մ³

Առաջացած 700մ³ ավելորդ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 10 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 1 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 9 մարդ

2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բենզալցկայանի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\Sigma. \text{н}} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³/օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 9 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³/օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր

$W_{\Sigma. \text{н}} = (1 \times 0.016 + 9 \times 0.025) \times 365 = 97.96 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.24 \text{ մ}^3/\text{օր.}$

Ջրապահանջի հաշվրկը իրականացված է համաձայն СНиП2/04.85*

б) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T \times D$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 2277 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0005 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

D – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

$U_1 = 2277 \times 0.0005 \times 180 \times 2 = 409.86 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2.27 \text{ մ}^3/\text{օր.}$

Ջրապահանջի հաշվրկը իրականացված է համաձայն ГОСТ 12.3.00 2-75

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 507.82 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի, կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

Աշխարհագրական տեսակետից հետազննվող տարածքը տեղադրված է ՀՀ Արարատի մարզի գ. Այնթապում, Երևանից 1-2 կմ 14 հողամաս հասցեում:

Ուսումնասիրվող տեղանքի կոսմոֆոտո



Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ Արաքս գետի կողմը:

Ռելիեֆի բացարձակ նիշը տատանվում է 860 (պայմանական) մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական հասակի լճագետային ապարները (talQ4): Մեր ուսումնասիրվող հարթակում առկա են լիցքերը, կավային և գետաքարակոպձային գրունտները:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախկինում հորատման միջոցով ուսումնասիրությունների հիման վրա տարածքում գրունտային ջրերի գտնվում են 15 մետրից խորը հորիզոններում: Մեր հետազննվող տեղամասում հետախուզահորերով և արխիվային նյութերի հիման վրա գրունտային ջրեր չեն բացահայտվել: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարսոտը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$: 2.

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը. Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում և ներկայիս լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ 2 հիմնական գրունտների շերտեր կամ ինժեներաերկրաբանական տարրեր (ԻԵՏ) վերնից–ներքև.

Ստորև ներկայացված է հիմնական գրունտների շերտերը կամ ԻԵՏ-ները: Գրունտների նկարագրությունները

Շերտ-1 0,0-1,1 մետր Լիցքեր (տարբեր բույսերի արմատներ կենցաղային թափոններ, ավազակավ) Գրունտը ըստ շահագործման դժվարության համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ 101-ի 23.1) II կարգ է

Շերտ-2 (alQ) 1,1-4,0 մետր Ավազակավ պինդ, շագանակագույն, ավազային մասնիկների պարունակությամբ: ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ 101-ի 33 4) III կարգ է:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայն, գ. Այնթապ, Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս հասցեում:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 860,0 (պայմանական) մետրի սահմաններում:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված 2,5 մետր խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 2 տարբեր շերտերով կամ ԻԵՏ-ներով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 3.1 աղյուսակում: Տվյալ տեղամասում փորվել են 4 հատ հետախուզահորեր: Գրունտների կարգը նրանց հատկությունները գնահատելու համար վերցվել են նախկինում «Գեոզոն» ՍՊԸ կողմից գ. Այնթապ 0803, 3-րդ փողոց 57 հասցեի հորատման արդյունքում կատարված լաբորատոր նյութերի տվյալները: Բոլոր տվյալների համադրմամբ կարելի է ասել հետևյալը, որ առաջինը լիցքերն են, շերտը 2-ը պինդ ավազակավն է: Շերտ-2-ի գրունտը՝ ունի ($R_0=2,5$ կգ/սմ²), նախնական դիմադրություն: Առաջին շերտը չդիտարկել, որպես հիմնատակ շինությունների համար:

- Նախկինում հորատման միջոցով ուսումնասիրությունների հիման վրա տարածքում գրունտային ջրերի գտնվում են 15 մետրից խորը հորիզոններում:

- Հստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 սանտիմետր:

- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը բացակայում են:

- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ հարկ լինելու դեպքում ինժեներ-երկրաբանի կողմից կատարել հիմնափուսի գնում և /ակտ/ տրամադրում:

Ճարտարագետ-երկրաբան՝



Դ. Ասատրյան

3.1 Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող տարածքն ունի չոր, մայրցամաքային կլիմա: Կլիմայի առանձնահատկությունների ձևավորման հարցում մեծ դեր են խաղում աշխարհագրական դիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները, տարածքի պաշտպանվածությունը բարձր լեռնային զանգվածներով: «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ ըստ «Արտաշատ» օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 5.1

Օդի ջերմաստիճան

Բնակավայր	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արտաշատ	-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9	-28.9	42.6

Աղյուսակ 5.2

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ.	Սեպ.	Հոկ.	Նոյեմ.	Դեկտ.		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Արտաշատ	78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79	64	78	62	52	35

Աղյուսակ 5.3

Մթնոլորտային տեղումներ

Բնակավայր	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արտաշատ	18	18	26	36	39	23	11	6	10	22	23	17	249	102	147
	18	20	32	36	43	34	27	25	28	36	38	22	43		

Աղյուսակ 5.4

Ձնածածկույթ

Բնակավայր	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Արտաշատ	40	36	46	41

Աղյուսակ 5.6

Քամի

Բնակավայր	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրերի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
Արտաշատ	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	Հվ-Արլ	2.0	Հվ-Արլ	3.1
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7						
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6				
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6						
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4				
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3						
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3				
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0						

3.2 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Այնթափ բնակավայրում /բնակչությունը՝ 9550 մարդ/ չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

3.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով:

Տեղեկատվությունը ներկայացված է համաձայն «Հիդրոոգեոլոգիականության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2024թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների:

Գործունեության տարածքը պատկանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքին:

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունակենցաղային կեղտաջրերը: Հրազդանի ՋԿՏ 14% 29% 24% 2024 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 14%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 33%-ում՝ 3-րդ դաս, 24%-ում՝ 4-րդ դաս, 29%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Քասախ գետի՝ Ապարան քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս և 5-րդ դասից՝ 4-րդ դաս համապատասխանաբար: Աշտարակ քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Գեղարոտ գետի՝ գետաբերանի դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրազդան գետի՝ Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Մարմարիկ գետի՝ Հանքավան գյուղից վերև դիտակետում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Տանձաղբյուր գետի՝ Ծաղկաձոր քաղաքից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը: Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ: 2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1126.4մլն մ3, որից 43.2%-ը բաժին է ընկնում մակերևութային, 56.6%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (41.6%), արտադրական (4.2%) և խմելու (5.9 %) նպատակներով:

Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը կազմել են բազմամյա միջին արժեքների 70-115%-ը: Հրազդան-Հրազդան դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 7.41 մ3/վ (բազմամյա միջինը՝ 7.77 մ3/վ է), Քասախ-Վարդենիս դիտակետում՝ 0.85 մ3/վ (բազմամյա միջինը՝ 1.21 մ3/վ է), Քասախ-Աշտարակ դիտակետում՝ 3.85 մ3/վ (բազմամյա միջինը՝ 3.43 մ3/վ է): 2024 թվականին Հրազդան և Քասախ գետերի ավազաններում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին

ամսական ելքերը եղել են հիմնականում նորմաներից ցածր, կամ նորմայի սահմաններում: Առանձին ամիսներին նորմայից բարձր ելքերը պայմանավորված են եղել հոսքի կարգավորմամբ՝ Քասախ-Աշտարակ հիդրոլոգիական դիտակետում, Հրազդան-Հրազդան, Մարմարիկ-Աղավնաձոր դիտակետերում՝ Մարմարիկի ջրամբարից ջրի բացթողնմամբ:

Որակական մոնիթորինգ

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ապարան քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված բերիլիումով, Ապարան քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում իոնով և ընդհանուր ֆոսֆորով, Աշտարակ քաղաքից վերև և ներքև և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Աշտարակ քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև հատվածում՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով, երկաթով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրիտ, նիտրատ, ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով, նատրիումով և ընդհանուր ֆոսֆորով: Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով և երկաթով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրատ իոններով, մանգանով և երկաթով: Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4 -րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Արգել գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված արսենով և բարիումով, Արգնի ՀԷԿ-ից վերև՝ արսենով: Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով: Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով: Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, վանադիումով, երկաթով, բարիումով և ալյումինով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

3.4 Հողածածկ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերնութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2023 թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ իրականացվել են միայն Լոռու մարզում:

Գործունեության տարածքը յուրացված է տարածքի կառուցապատմամբ: Հողային համակարգերի աղտոտվածությունը քիչ հավանական է:

3.5 Կենսաբազմազանություն

3.5.1 Բուսականություն

ՀՀ Արարատի մարզի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Կենսաբանական ռեսուրսներ: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշր, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողոչուններ /սևփարփար, մեծսուզակ, փոքրսուզակ, կոնչանբադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

3.5.2 Բուսական աշխարհ

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեոնոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haiocnemumstrobilaceum*: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinosa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argyrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամրգանման, գեղածնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ *Cephalorrhynchustakhtadzhianii*, *Zygophyllumatriplicoides*:

Մարզի ենդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (*Linaceae*), մեխակազգիներ (*Caryophyllaceae*):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից:

Էնդեմիկ տեսակն է իշակաթնուկ ազգիներ (*Euphorbiaceae*):

Տվյալ տարածքում հանդիպող բույսերի Կարմիր գրքում հանդիպող բուսատեսակ՝ Տերեփուկ վավիլովի (*Centaurea vavilovii*):

Ներկայացված տարածքում կարող է հանդիպել կենդանիների Կարմիր գրքում գրանցված Ներկակար - *Coracias garrulus* տեսակը: Կարգավիճակը՝ սակավաթիվ, լիցոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU Blab(iii): Գործունեության իրականացման տարածքում տեսակի հայտնաբերման դեպքում կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան բնապահպանական և կանխարգելիչ միջոցառումները:

3.5.3 Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /*Testudograeca*/, բարեկազմ օձ ազուխ մողեսը /*Ophisopselegans*/, Շտրաուխի /*Eremiasstrauchi*/ և Անդրկովկասյան /*E. pleskei*/ մողեսիկները, Անդրկովկասիան թաքիրային կլորագլուխը /*Phrynocephalushelioscopuspersicus*/, մողեսաօձը /*Malpolonmonspessulannus*/, վզնոցավոր /*Eireniscollaris* / և՛ այկական /*E. punctatolineatus* / էյրենիսները, կարմրափոր սահնօձը կամշահմարը / *Coluberschmidtii*/ և կապարագույն սահնօձը /*C. nummifer*/, Անդրկովկասյան գյուրզան /*Viperalebetina*/: Կրծողներից – սովորական /*Microtusarvalis*/ և հասարակական /*M. socialis*/ դաշտամկները, հարավային /*Merionesmeridianus*/, փոքրասիական /*M. blackleri*/ և Վինոգրադովի / *M. vinogradovi* / ավազամկները: Կատվազգիներից - եղեգնակատուն /*Felischaus*/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/*Mauremiscaspica*/ և լճագորտը/*Ranaridibunda*/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մկնիկ, կովկասյան տարավոն, Չեռնովի մերկաչք:

Տվյալ տարածքում հանդիպող կենդանիների Կարմիր գրքում հանդիպող կենդանատեսակ՝ տափաստանային հողմավոր բազե (*Falco naumanni*):

4.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

4.7 Պատմամշակութային հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Արարատի մարզի Այնթափ բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 1 հուշարձան (1 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1973 թ.	գ. մ.	—	3.12/	ճարտ.՝ Գ. Ղամբարյան
Հուշարձան	1983 թ.	գյուղի մեջ՝ պուրակում	—	3.12/2	

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, շինարարական աշխատանքների ընթացում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կդադարեցնեն աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնեն լիազորված մարմին»:

3.6 Թափոնների կառավարում

Աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	9120060101004	30մ³
2.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	700 մ³
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող	IV	35131100 01 00 4	7 մ³

	թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)			
6.	Չտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ³
7.	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավել	III	31402303 04 03 3	8 մ³
8.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ	V	35121601 01 99 5	0.1տ

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Բենզալցակայանի շինարարության և շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի աղբավայր համապատասխան լիցենզավորված ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախատեսվող գործունեության (բենզալցակայանի կառուցում և շահագործում) ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու վրա կարելի է բաժանել երկու պայմանական փուլերի.

1. Ազդեցություն՝ շինարարական աշխատանքների ընթացքում,
2. Ազդեցություն՝ շահագործման ընթացքում:

4.1 Շինարարական աշխատանքների փուլ (Ժամանակավոր ազդեցություն)

Շինարարության փուլում ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ, տեղայնացված է շինհրապարակի սահմաններում և պայմանավորված է հողային աշխատանքներով, տեխնիկայի շահագործմամբ ու շինարարական թափոնների առաջացմամբ:

4.1.1 Մթնոլորտային օդի աղտոտում

Շինարարության ընթացքում կանխատեսվում է օդի ժամանակավոր աղտոտում՝ պայմանավորված երկու հիմնական գործոնով.

- Անօրգանական փոշու անկազմակերպ արտանետումներ՝ հողային աշխատանքների, հարթեցման և շինանյութերի տեղափոխման ընթացքում:
- Այրման արգասիքների (ծխագազերի) արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչների աշխատանքից (ածխածնի օքսիդ՝ CO, ազոտի օքսիդներ՝ NOx, ծծմբի երկօքսիդ՝ SO₂ և պինդ մասնիկներ/մուր):

Մեղմացնող միջոցառումներ. Արտանետումները նվազեցնելու նպատակով կիրականացվի շինհրապարակի և տրանսպորտային ուղիների պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, իսկ սորուն նյութեր տեղափոխող մեքենաների թափքերը պարտադիր կկահավորվեն անթափանց ծածկոցներով (թաղանթներով):

4.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի և թրթռումների աղբյուր են հանդիսանալու շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները:

Աշխատատեղերում և հարակից տարածքներում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ. N 138 հրամանով հաստատված Սանիտարական նորմերին:

Մեղմացնող միջոցառումներ. Օգտագործվող տեխնիկան ընտրվելու է այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲԱ: Հաշվի առնելով բնակելի կառուցապատումից ունեցած անվտանգ հեռավորությունը և աշխատանքների կատարումը բացառապես ցերեկային ժամերին (08:00 - 22:00, թույլատրելի սահմանը՝ 55 դԲԱ՝ աղմուկի ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

4.1.3 Ջրօգտագործում և ջրահեռացում

Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, փորվող գրունտի խոնավացման (տեխնիկական ջուր), ինչպես նաև անձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար:

Մեղմացնող միջոցառումներ. Շինարարության փուլում աշխատողների սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովելու համար տեղում կտեղադրվեն ժամանակավոր կենսազուգարաններ (բիոզուգարաններ), իսկ խմելու որակի ջուրը կմատակարարվի շշակցված տարաներով: Տեխնիկական ջուրը կբերվի ջրատար մեքենաներով:

4.1.4 Ազդեցությունը հողածածկի վրա

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների՝ նախատեսվող տարածքում հողաբուսաշերտը (բերրի շերտը) բացակայում է (տարածքն ամբողջությամբ յուրացված կամ արհեստականորեն տրորված է): Հետևաբար, հողի բերրի շերտի հանման, կուտակման կամ հողածածկի վնասման ռիսկեր չեն կանխատեսվում: Տեխնիկայի սպասարկումը կիրականացվի հատուկ կահավորված կետերում՝ հողի՝ նավթամթերքներով տեղային աղտոտումը բացառելու համար:

4.1.5 Ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա

Տարածքը նախկինում ամբողջությամբ յուրացված էր: Այստեղ բացակայում են բնական բուսածածկը, ծառաթփային տնկարկները և վայրի կենդանիների բնական ապրելավայրերը: Շինարարության փուլում կենսաբազմազանության վրա ուղղակի բացասական ազդեցություն չի սպասվում:

4.1.6 Շինարարական թափոնների կառավարում (Շինադր)

Շինարարության ընթացքում գոյացող հիմնական թափոնատեսակը շինարարական աղբն է և քանդման ենթակա կառույցների/ծածկույթների մնացորդները:

Մեղմացնող միջոցառումներ. Թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Շինադրը ժամանակավորապես կկուտակվի հատուկ սահմանազատված հարթակում և պայմանագրային հիմունքներով, համայնքի կողմից հատկացված երթուղիով կտեղափոխվի թույլատրված պաշտոնական աղբավայր:

4.1.7 Սոցիալական ազդեցություն

Շինարարության փուլում սոցիալական ազդեցությունը գնահատվում է **դրական**, քանի որ կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր տեղական աշխատուժի համար: Գործընթացը չի առաջացնի լրացուցիչ ժողովրդագրական կամ ենթակառուցվածքային ճնշումներ համայնքի վրա:

4.1.8 Ազդեցությունը մարդու առողջության վրա

Շինարարական աշխատանքների ընթացքում առողջապահական ռիսկերը կրում են կարճաժամկետ բնույթ և բաժանվում են երկու խմբի՝ ազդեցություն հարակից բնակչության վրա և ազդեցություն շինարարական անձնակազմի վրա:

Ա. Ազդեցությունը հարակից բնակչության վրա

- **Շնչառական համակարգի գրգռում.** Շինարարական փոշու և տեխնիկայի արտանետած դիզելային այրման արգասիքների տարածումը կարող է ժամանակավոր անհանգստություն պատճառել մոտակա բնակիչներին: Այն կարող է առաջացնել հազ, կոկորդի չորություն և ալերգիկ ռեակցիաների սրացում (հատկապես ասթմա կամ շնչառական այլ խնդիրներ ունեցող անձանց և երեխաների մոտ):
- **Ակուստիկ անհանգստություն.** Տեխնիկայի աշխատանքից առաջացող ժամանակավոր բարձր աղմուկը կարող է դառնալ նյարդային գրգռվածության և հոգնածության պատճառ, եթե չպահպանվեն աշխատանքային ժամերը:

Կանխարգելիչ միջոցառումներ. Փոշու ճնշման նպատակով տարածքի կանոնավոր ջրումը և աշխատանքների իրականացումը բացառապես ցերեկային ժամերին (ժամը 08:00-ից 22:00-ն) նվազագույնի կհասցնեն բնակչությանը պատճառվող անհանգստությունը:

Բ. Ազդեցությունը շինարարական անձնակազմի (աշխատողների) վրա

Շինարարները գտնվում են անմիջական ազդեցության գոտում, ուստի նրանց համար ռիսկերն ավելի բարձր են.

- **Մասնագիտական հիմնադրությունների ռիսկ.** Երկարատև փոշոտ միջավայրում առանց պաշտպանիչ միջոցների աշխատելը կարող է հանգեցնել շնչառական օրգանների քրոնիկ հիվանդությունների (փոշեգարություն, բրոնխիտ):
- **Լսողության վրա ազդեցություն.** Ծանր տեխնիկայի անմիջական հարևանությամբ աղմուկի մակարդակը կարող է գերազանցել 80 դԲԱ-ն, ինչը երկարատև ներգործության դեպքում վնասում է լսողական ապարատը:
- **Վիբրացիոն ազդեցություն.** Ձեռքի էլեկտրական և տեխնիկական գործիքների (օրինակ՝ պնևմատիկ մուրձեր) օգտագործումը կարող է առաջացնել տեղային թրթռումային հիվանդություն (հոդացավեր, անոթային խանգարումներ ձեռքերում):
- **Տրավմատիզմ և դժբախտ պատահարներ.** Բարձրության վրա աշխատանքները, ծանր բեռների տեղափոխումը և մեխանիզմների հետ վարվելը պարունակում են ֆիզիկական վնասվածքների մշտական ռիսկ:

Կանխարգելիչ միջոցառումներ աշխատողների համար.

1. Անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) պարտադիր կիրառում՝ սաղավարտներ, փոշուց պաշտպանող դիմակներ (ռեսպիրատորներ), աղմուկը խլացնող ականջակալներ, ձեռնոցներ և հատուկ կոշիկներ:
2. Տեխնիկական անվտանգության կանոնների խստիվ պահպանում և ամենօրյա հրահանգավորում աշխատանքները սկսելուց առաջ:
3. Աշխատանքի և հանգստի ռեժիմի ճիշտ կազմակերպում (թրթռող գործիքների հետ աշխատանքի ժամանակային սահմանափակումներ):
4. Առաջին օգնության դեղարկղիկի առկայություն շինհրապարակում և խմելու ջրի մշտական հասանելիություն:

4.2 Շահագործման փուլ (մշտական ազդեցություն)

Շահագործման փուլի ազդեցությունները կրում են երկարատև բնույթ և պահանջում են նախագծային սահմանափակումների խստագույն պահպանում:

4.2.1 Մթնոլորտային օդի աղտոտում

Շահագործման ընթացքում օդն աղտոտող հիմնական աղբյուրներն են վառելիքի պահեստարանները (ռեզերվուարները) և վառելիքաբաշխիչ աշտարակները: Արտանետվող հիմնական նյութերն են բենզինի թեթև ածխաջրածինները (C_1 - C_{10} սահմանային ածխաջրածիններ, ամիլեններ, բենզոլ, տոլուոլ, քսիլոլ), որոնք օդ են թափանցում պահեստարանների լիցքավորման («մեծ շնչառություն») և մեքենաների բաքերի լիցքավորման («փոքր շնչառություն») ժամանակ:

Մեղմացնող միջոցառումներ. Օդի աղտոտումը նվազագույնի հասցնելու համար կկիրառվեն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ.

1. Ռեգերվուարների վրա կտեղադրվեն բարձր հերմետիկության **շնչառական կանխարգելիչ փականներ:**
2. Կներդրվի **բենզինի գոլորշիների հետադարձման (ռեկուպերացիայի) համակարգ՝ Stage I և Stage II** դասի, որը թույլ է տալիս կլանել և հետ մղել արտանետվող ածխաջրածինների գոլորշիների մինչև 95%-ը:

4.2.2 Ջրահեռացում և ջրային ռեսուրսների պաշտպանություն

Լցակայանի տեխնոլոգիական պրոցեսում արտադրական (տեխնոլոգիական) կեղտաջրեր չեն առաջանում: Առաջանում են միայն կենցաղային կեղտաջրեր աշխատակազմի և հաճախորդների սանիտարական հանգույցներից:

- **Կենցաղային ջրահեռացում.** Կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը սանիտարական սարքավորումներից կհեռացվեն ներքին կոյուղու ցանցի միջոցով և կմիանան նախատեսվող մաքրման կայանին:
- **Մակերևութային (անձրևաջրերի) հոսքեր.** Կայանի ասֆալտապատ հարթակից անձրևային և հալոցքային ջրերը կարող են պարունակել տրանսպորտից թափված նավթամթերքների հետքեր և կախյալ մասնիկներ:

Մեղմացնող միջոցառումներ. Տարածքի անձրևաջրերը հավաքվելու են հատուկ անձրևորսիչ համակարգով և ուղղվելու են տեղային մաքրման կայան՝ **կոալեսցենտային ֆիլտրով յուղաավազորսիչ:** Այնտեղ ջրերը կմաքրվեն նավթամթերքներից և կախյալ նյութերից մինչև սահմանային թույլատրելի նորմերը, որից հետո միայն կօգտագործվեն կանաչ տարածքների ոռոգման համար:

4.2.3 Հողային ռեսուրսների պաշտպանություն

Շահագործման ընթացքում հողերի աղտոտման ռիսկը կապված է վառելիքի հնարավոր արտահոսքերի կամ վթարային թափոնների հետ:

Մեղմացնող միջոցառումներ.

- Վառելիքի ստորգետնյա պահեստարանները կլինեն **երկպատյան՝** պատյանների միջև եղած տարածության հերմետիկության ավտոմատ վերահսկմամբ և ազդանշանային համակարգով, ինչը բացառում է նավթամթերքի ստորգետնյա սպրդումը դեպի գրունտ:
- Լիցքավորման և տրանսպորտի շարժի հարթակներն ամբողջությամբ կունենան անջրանցիկ, կայուն (բետոնե կամ բետոնասաֆալտային) ծածկույթ:

4.2.4 Սոցիալական ազդեցություն

Շահագործման փուլում սոցիալական ազդեցությունը **միանշանակ դրական է՝** պայմանավորված նոր մշտական աշխատատեղերի ստեղծմամբ, համայնքային ենթակառուցվածքների զարգացմամբ և տեղական բյուջե հարկային մուտքերի ավելացմամբ:

4.2.5 Ազդեցությունը մարդու առողջության վրա

Բենզալցակայանների շահագործման հետ կապված առողջապահական ռիսկերը հիմնականում պայմանավորված են բենզինի թեթև գոլորշիների (հատկապես անուշահոտ ածխաջրածինների) ներշնչմամբ և տրանսպորտային միջոցների արտանետած գազերի կոմուլյատիվ (կուտակային) ազդեցությամբ:

Քիմիական գործոններ և հիմնական վտանգները

Առողջության համար ամենավտանգավոր նյութը բենզինի գոլորշիներում առկա **բենզոլն է** (C_6H_6) (դասվում է 1-ին կարգի վտանգավորության նյութերի շարքին, ապացուցված մարդու կանցեռոզն):

- **Սուր ազդեցություն (կարճատև բարձր խտություններ).** Կարող է առաջացնել կենտրոնական նյարդային համակարգի թեթև ընկճում՝ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց, հոգնածություն, ինչպես նաև աչքերի և վերին շնչուղիների լորձաթաղանթի գրգռվածություն:
- **Քրոնիկ ազդեցություն (երկարատև ցածր խտություններ).** Երկար տարիներ ԲԼԿ-ին մոտ ապրելու կամ այնտեղ աշխատելու դեպքում (առանց պաշտպանիչ միջոցների) ռիսկերը ներառում են.
 - *Արյունաստեղծ համակարգի խանգարումներ.* Բենզոլի կանոնավոր ներշնչումը կարող է հանգեցնել ոսկրածուծի ֆունկցիայի ընկճման, անեմիայի (սակավարյունություն) և լեյկեմիայի (արյան քաղցկեղ) զարգացման:
 - *Շնչառական համակարգ.* Շնչառական ուղիների քրոնիկական բորբոքումներ, ասթմատիկ երևույթների սրացում (հատկապես երեխաների մոտ):

Ֆիզիկական գործոններ

- **Աղմուկ և տաքնապայնություն.** Մեքենաների մշտական հոսքը և ԲԼԿ-ի գիշերային լուսավորությունը կարող են հարակից բնակելի տների բնակիչների մոտ առաջացնել քնի խանգարումներ, նյարդային գրգռվածություն և քրոնիկ սթրեսային վիճակներ:

Առողջապահական ռիսկերի նվազեցման երաշխիքներ

Մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունը գրեթե ամբողջությամբ կչեզոքացվի հետևյալ պարտադիր պայմանների կատարմամբ.

1. **Սանիտարական պաշտպանիչ գոտու (ՄՊԳ) պահպանում.** Բենզալցակայանը պետք է տեղակայվի բնակելի և հասարակական շենքերից ՀՀ քաղաքաշինական և սանիտարական նորմերով սահմանված անվտանգ հեռավորության վրա:
2. **Աշխատողների պաշտպանություն.** Աշխատակազմը պետք է անցնի պարբերական բժշկական զննություն, ապահովվի հատուկ արտահագուստով և անցնի տեխնիկական անվտանգության հրահանգավորում:
3. **Ռեկուպերացիայի համակարգի անխափան աշխատանք.** Վառելիքի գոլորշիների հետգրավման կայանների կիրառումը կանխում է թունավոր ՑՕՄ-երի (ցնդող օրգանական միացությունների) տարածումը շրջակա միջավայր՝ ապահովելով մաքուր օդային ավազան հարակից համայնքի համար:

5. ՀՐԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարության փուլ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.

3) ավագը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները:

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ:

6) ավագը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով:

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:

10) շինարարության ողջ ընթացքում կիրառել փոշենստեցման այդ թվում փոշեճնշիչ սարքավորումներ:

5.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները:

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակում, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

5.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

5.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման

դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

5.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

5.3.7 Թափոնների կառավարում

Բենզալցկայանի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել

- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բենզալցկայանի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

5.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է խոտածածկի տեսքով:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5.3.9 *Օդերևութաբանական պայմանների դեպքում իրականացվող միջոցառումներ*

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է շինարարական գործընթացների հսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է շինարարական գործընթացները,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է շինարարական գործընթացները:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես ընկերության անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:

Շահագործման փուլ

Հեղուկ վառելիքի լցակայանի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա տեխնածին ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և հնարավոր վթարային իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ բնապահպանական և կազմակերպչատեխնիկական միջոցառումները.

5.3.10 Մթնոլորտային օդի պահպանություն

- **Գոլորշիների հետորսման համակարգերի կիրառում.** Վառելիքատար մեքենաներից ստորգետնյա ռեզերվուարներ վառելիքի դատարկման (մեծ շնչառություն) և տրանսպորտային միջոցների լիցքավորման (փոքր շնչառություն) գործընթացներում ածխաջրածինների ցնդումը կանխելու նպատակով կիրառել գոլորշիների հետորսման/ռեկուպերացիայի փակ համակարգեր:
- **Տեխնոլոգիական հերմետիկություն.** Ապահովել վառելիքի պահպանման բաքերի և խողովակաշարերի կատարյալ հերմետիկությունը: Ռեզերվուարների վրա տեղադրել սահմանային ճնշման կարգավորիչ հերմետիկ շնչառական փականներ՝ բացառելով թեթև ածխաջրածինների ազատ արտանետումը մթնոլորտ:
- **Լիցքավորման գործընթացի վերահսկողություն.** Բաշխիչ աշտարակների վրա տեղադրել ժամանակակից, ավտոմատ անջատիչներով և գոլորշի կլանող էլաստիկ պատյաններով օժտված լիցքավորման ատրճանակներ:

5.3.11 Ջրային ռեսուրսների և հողերի պահպանություն

- **Մակերևութային հոսքերի մաքրում (Նավթորսիչ).** Լցակայանի հարթակի կոշտ ծածկույթից տարբեր տեսակի տեղումների (անձրևաջրեր, հալոցքային ջրեր) արդյունքում ձևավորվող և նավթամթերքներով հնարավոր աղտոտված հոսքաջրերը հավաքելու համար տարածքը կահավորել ուղղորդված թեքություններով և անձրևատար ընդունիչներով: Հոսքաջրերն անպայմանորեն ուղղել դեպի տեղային մաքրման համակարգ՝ ավազա-նավթորսիչ (սեպարատոր):
- **Երկպատյան տեխնոլոգիայի կիրառում.** Որպես ստորգետնյա ջրերի և հողային շերտի աղտոտման կանխարգելման հուսալի երաշխիք՝ օգտագործել երկպատյան (երկշերտ) ռեզերվուարներ: Միջպատյան տարածությունը կահավորել ճնշման փոփոխության ավտոմատ սենսորային հսկիչներով՝ հնարավոր ներքին արտահոսքերը վաղ փուլում հայտնաբերելու համար:
- **Հակաֆիլտրացիոն ծածկույթ.** Ավտոմեքենաների կանգառի և լիցքավորման գոտիներում ապահովել անջրանցիկ, նավթակայուն բետոնե կամ ասֆալտբետոնե ծածկույթի ամբողջականությունը՝ բացառելով նավթամթերքների ներսրտումը գրունտի մեջ:

5.3.12 Թափոնների կանոնակարգված կառավարում

- **Վտանգավոր թափոնների տեղակայում.** Նավթորսիչ համակարգի մաքրման արդյունքում առաջացող նավթաշլամները, ինչպես նաև շահագործման ընթացքում յուղերով և վառելիքով աղտոտված օգտագործված լաթերն ու կլանիչ նյութերը (սորբենտները) դասակարգել որպես վտանգավոր թափոններ: Դրանք կուտակել հատուկ մակնշված, հերմետիկ տարաներում՝ հատկացված պահեստային գոտում:
- **Լիցենզավորված հեռացում.** Կազմակերպել վտանգավոր թափոնների պարբերական հանձնումը համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպություններին՝ դրանց հետագա վնասագերծման կամ ուտիլիզացման նպատակով:
- **Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն.** Տարածքում մշտապես ապահովել կլանիչ նյութերի (ավազ, մասնագիտացված սորբենտներ) անհրաժեշտ

պաշար՝ վառելիքի պատահական տեղային թափվածքները արագ տեղայնացնելու և հավաքելու համար:

5.3.13 Ակուստիկ աղտոտվածության (աղմուկի) նվազեցում

- **Տեխնիկական սպասարկում.** Բոլոր տեխնոլոգիական սարքավորումները, պոմպերը և օդափոխության համակարգերը պահել սարքին վիճակում, տեղադրել թրթռամեկուսիչ հիմքերի վրա՝ ապահովելով ձայնային ճնշման մակարդակի համապատասխանությունը քաղաքային միջավայրի համար սահմանված սանիտարական նորմերին:
- **Լոգիստիկայի կազմակերպում.** Տարածքում սահմանել տրանսպորտային միջոցների արագության սահմանափակում և արգելել ձայնային ազդանշանների կիրառումը (բացառությամբ վթարային իրավիճակների):

6. ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՑԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

6.1 Ընդհանուր դրույթներ

Սույն բաժինը սահմանում է հեղուկ վառելիքի կայանի հնարավոր արտակարգ իրավիճակների (պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, սողանք) ռիսկերի գնահատման, կանխարգելման և արձագանքման կարգը:

Փաստաթղթի նպատակն է՝

- ապահովել անձնակազմի և հաճախորդների անվտանգությունը
- նվազեցնել նյութական վնասները
- ապահովել արագ և արդյունավետ արձագանք

6.2 Ռիսկերի գնահատում

6.2.1 Հիմնական վտանգներ

Պայթյուն և հրդեհ

- վառելիքի արտահոսք
- գոլորշիների կուտակում
- կայծ կամ բաց կրակ

Երկրաշարժ

- բաքերի վնասում
- խողովակների ճեղքում
- կառուցվածքների փլուզում

Սողանք

- հողի տեղաշարժ
- տարածքի անկայունություն

6.2.2 Ռիսկերի մակարդակի գնահատում

Վտանգ	Հավանականություն	Ազդեցություն	Ռիսկի մակարդակ	Կանխարգելիչ միջոցներ	Արձագանք
Պայթյուն	Բարձր	Շատ բարձր	● Բարձր	Հերմետիկ համակարգեր, հակակայծ սարքեր, ստուգումներ	Տարհանում, հրդեհաշիջում
Հրդեհ	Բարձր	Շատ բարձր	● Բարձր	Հրդեհաշիջման համակարգեր, ուսուցում	Հրդեհաշիջում, ահազանգ
Երկրաշարժ	Միջին	Շատ բարձր	● Բարձր	Մեյսմակայուն կառուցում, ավտոմատ փականներ	Անջատում, տարհանում
Սողանք	Ցածր/Միջին	Բարձր	□ Միջին	Դրենաժ, հենապատեր	Տարածքի փակում
Վառելիքի արտահոսք	Միջին	Բարձր	□ Միջին	Խողովակների ստուգում	Մեկուսացում, մաքրում

6.3 Կանխարգելիչ միջոցառումներ

6.3.1 Տեխնիկական միջոցներ

- Վառելիքի բաքերի հերմետիկության մշտական վերահսկում
- Ավտոմատ անջատման համակարգերի տեղադրում
- Հրդեհաշիջման համակարգերի առկայություն
- Գազի արտահոսքի սենսորների տեղադրում

6.3.2 Կազմակերպչական միջոցներ

- Անձնակազմի պարբերական ուսուցում
- Անվտանգության հրահանգների պահպանում
- Պլանային տեխնիկական զննում

6.4 Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան

6.4.1 Պայթյուն / Հրդեհ

- Անմիջապես դադարեցնել վառելիքի մատակարարումը
- Տարհանել բոլոր անձանց
- Ակտիվացնել հրդեհաշիջման համակարգերը

- Զանգահարել արտակարգ ծառայություններ
- Մեկուսացնել տարածքը

6.5 *Երկրաշարժ*

- Դադարեցնել բոլոր աշխատանքները
- Հեռանալ վտանգավոր գոտիներից
- Անջատել վառելիքի համակարգերը
- Ստուգել արտահոսքերը
- Տեղեկացնել պատասխանատու անձանց

6.6 *Սողանք*

- Անմիջապես դադարեցնել գործունեությունը
- Տարհանել անձնակազմը և հաճախորդներին
- Փակել տարածքը
- Կապ հաստատել համապատասխան ծառայությունների հետ

6.7 *Տարհանման կարգ*

- Տարհանումը իրականացվում է նախապես սահմանված ուղիներով
- Անձնակազմը պարտավոր է ուղղորդել հաճախորդներին
- Հավաքման կետը սահմանվում է անվտանգ հեռավորության վրա

6.8 *Պատասխանատվություն*

- Բենզալցակայանի ղեկավարը պատասխանատու է պլանի իրականացման համար
- Անձնակազմը պարտավոր է հետևել անվտանգության կանոններին
- Խախտումները ենթակա են կարգապահական պատասխանատվության

6.9 *Վերահսկում և թարմացում*

Սույն պլանը վերանայվում է տարեկան առնվազն մեկ անգամ կամ արտակարգ իրավիճակից հետո:

6.10 *Եզրակացություն*

Ռիսկերի ճիշտ գնահատումը և կանխարգելիչ միջոցառումների իրականացումը հնարավորություն են տալիս նվազեցնել արտակարգ իրավիճակների հավանականությունը և ապահովել արագ արձագանք:

7. ՀՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ԾՐԱԳԻՐ

Բենզալցկայանի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- 1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- 2. Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ՝ վերանորոգվող վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս» («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդված, 4-րդ կետ), որը նպատակ է հետապնդում կանխարգելել փոշեառաջացումը և իրականացնել փոշենստեցում
- 3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- 4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- 5. Շահագործվող տրանսպորտային և այլ փոխադրամիջոցների պարբերական ստուգումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 630 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը		350000

կանխելու նպատակով		
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO _x) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;	4x40000	160000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	4x30000	120000
Ամբողջ շինարարության համար		630000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌ ԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(f) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. (g) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. (h) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. (i) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները. (j) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. (k) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. (l) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: (m) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում: (n) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ: (o) շինարարության ողջ ընթացքում կիրառել փոշենստեցման այդ թվում փոշեձնշիչ սարքավորումներ:

	Աղմուկ և թոթոուն	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: (c) Աշխատատեղերում աղմուկի և թոթոունների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում (d) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, (e) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, (f) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: (g) Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն (b) տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում: (c) ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, (d) անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակում, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(e) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. (f) պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ (g) Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: (h) Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: (i) Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. (j) Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում
Տարածքի բարեկարգում/կանաչ պատում		(k) կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; (l) ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	(m) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (n) շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (o) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (p) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (q) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել (r) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով (s) վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը (t) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; (u) Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը (v) հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ԾՐԱԳԻՐ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Օդի որակի հսկում	- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

	կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները. - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: - պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:				
--	--	--	--	--	--

	- շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովվի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ :				
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Աղմուկի մակարդակի հսկում	- Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում - Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույմներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, աղմուկի մակարդակի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությ յամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապե- տարանի վերահսկողո ւթյուն

	գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:				
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մասնագիտացված ընկերություն	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում	Շինարարության Ավարտին	Կապալառու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նախավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
12 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,
13 Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,
14 Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,
15 Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԹԱՄԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԵՅԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 17.08.2022թ. թիվ 8540, Համայնքի ղեկավարի որոշում 08.05.2023թ թիվ 2914-Ա և 15.06.2023թ թիվ 3957-Ա, Համայնքի ավագանու որոշում 13/12/2024թ. N 355-Ա, Համայնքի ղեկավարի որոշում 16/01/2025թ. N 109-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-012-0264-0008

Մակերեսի չափը (հա)՝ 0.2692

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 07022025-03-0068, գաղտնաբառ՝ J8P9BJVYJPVX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 07022025-03-0068, գաղտնաբառ՝ J8P9BJVYJPVX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



PM75-977F-F598-B264



Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքենումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-9263-26 20.07.2026թ.

Օբյեկտ **Կառուցում, ՀԱԳ ԵՎ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼԻՑԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**,

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

վարորդների և ուղևորների շենք 126.7 ք.մ, շվաքարան 158.8 ք.մ

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

Նախագծման փուլերը՝ **Նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, ռիսկայնության աստիճանը՝ IV**
Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) Նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Արարատ, համայնք՝ Մասիս գյուղ Այնթապ Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հողամաս, 03-012-0264-0008**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ԹԱՄԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ / 3703900792 / ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԲՐՅՈՒՍՈՎ ԹՐՄ., 62Զ, 23ԲՆ**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿՎԱՑԿԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԱՄԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ 07022025-03-0068**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ

փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 20.07.2029թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի մասում,գրանցված իրավունքի տեսակը՝սեփականություն,կադաստրային ծածկագիր 03-012-0264-0008

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափսերը

0.2692 հա

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))
3. Հողամասի առկա վիճակը

Չկառուցապատված

(ռեյնֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները

Միջպետական նշանակության ճանապարհ

(Ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

հարևան հասարակական նշանակության հողամասեր

(կից հողագտագործունեության անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներական սարքավորումների, ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Դ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել ՀԱԳ և հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցված վկայականում ամրագրված հողամասի սահմաններում

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ էքսիզային առաջարկության՝ 0,0- 60 մետր

9.2. (*) հեռավորությունը հարևան հողատերերից (օբյեկտներից) (մետր)

ըստ էքսիզային առաջարկության՝ 0,0-19,344 մետր

9.3. (*) թույլատրելի բարձրությունը (մետր)

ըստ էքսիզային առաջարկության՝ մինչև 6,20 մետր

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԸՆ 11-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

230,6/2692

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

Համաձայն նախագծի

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

Համաձայն նախագծի

9.7 այլ պահանջներ

Հաշվի առնելով Նորմատիվային պահանջները ջրահեռացումը նախատեսել կազմակերպված, բացառելով դեպի հարևան տարածքներ անձրևաջրերի հոսքը: Նախատեսել մեքենաների անվտանգ ելք և մուտքը: Ստանալ հարևան հողամասի սեփականատերերի համաձայնությունը սահմանագծից 0,31 մետր հեռավորությամբ ուղևորների սպասարկման սրահ կառուցելու համար

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

12.2 (*) Էլեկտրամատակարարում

12.3. (*) գազամատակարարում

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներն են

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարան

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

Վեոլիա ջրի տեխպայմանի համաձայնությունը

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

ՀԷՏ տեխպայմանի համաձայնությունը

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Գազպրոմ Արմենիա տեխպայմանի համաձայնությունը

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Վեոն արմենիա տեխպայմանի համաձայնությունը

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

համաձայն համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի

տարածքը նախապատրաստել շինարարությունը սկսելու համար

(ռեյինգի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

երկաթբետոն, քար, ամրան, մետաղ

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

Ապահովել հակահրդեհային նորմատիվային պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

պահպանել շրջակա միջավայրի ախտոտումը վտանգավուն նյութերից

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12,04,2001թ հ,286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կարգի ԺԲ ենթակետի և 44,1 կետի պահանջները

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

մինչև 20.07.2029թ., նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր,

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

Պետական համալիր փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի ծրագրավորագիրը՝ իդում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ ելքային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում

Համաձայնեցնել Մասիս համայնքի ղեկավարի հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ.բնակելի հասարակական,արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ հ/ 273-Ն հրաման ուժը կորցրած ճանաչելու մասին հ 128-Ն հրամանով հաստատված դրույթներին


28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Արարատի մարզ
Համայնք Մասիս, գյուղ Այնթապ
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 03-012-0264-0008
Մասշտաբ 1: 500



	Կոորդինատներ	
	X	Y
1	8453631.2317	4440232.0545
2	8453621.1771	4440238.6817
3	8453584.3171	4440262.9770
4	8453563.1618	4440224.2904
5	8453600.7805	4440195.2948
6	8453600.8213	4440195.2634
7	8453611.5475	4440186.9959

սպասարկման գրասենյակ

Կ.Տ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ Երևան, Ա. Արմենակյան փողոց 127

№ ՏՊ-310-6(10)/0582

«15» 12 2023թ

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

/Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի
դեկտեմբերի 25-ի N 523-Ն որոշման Գլուխ 27-ի 179 կետի 2-րդ ենթակետի/

Տրվում է
Պատճենը

Սպառողի հասցեն

Սեփականատեր Թամարա Սահակյանին
«Արաքս» մ/ճ-ի գլխ. ճարտարագետ Գ.Հակոբյանին

Մարզ Արարատ, համայնք Մասիս
գյուղ Այնթափ Երևան-Մեղրի մայրուղի
1-2 կմ 14 հողամաս
/կադ.ձանկագիր՝ 03-012-0264-0008 /

Հիմնական սնուցում

400

Սնուցման տեսակը

Պահանջվող հզորությունը (կՎԱ)

10

Սնման կետի լարումը (կՎ)

1. Տարածքի էլեկտրամատակարարման իրականացման նպատակով, վերը նշված հասցեում տեղադրել 400 կՎԱ հզորության 10/0.4 կՎ ենթակայան (ԳՕՍՏ-11920-85, ԳՕՍՏ-14695-80):
2. Ենթակայանի սնումն իրականացնել «Խարբերդ» 110/10 կՎ ե/կ-ի «գ. Այնթափ» 10կՎ օղային գծի թիվ 67 հենարանից՝ ճյուղավորումով, կառուցելով մոտ 30մ 10կՎ օղային գիծ:
3. Ճյուղավորման առաջին հենարանին տեղադրել 10 կՎ լարման գծային բաժանիչ:
4. Սահմանազայման կետում՝ ե/կ-ը սնող 10 կՎ ճյուղավորման սկզբում, տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր (տեղակայել հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորներ, բացառությամբ էլեկտրոնային առևտրային հաշվիչի, այն տեղադրվում է «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից):
5. Էլ.մատակարարման նախագիծը՝ նախապես համաձայնեցնել «Արաքս» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի, «ՀԷՏ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի և համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
6. Սնուցումը կիրականացվի՝ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՏ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության և մասնաճյուղի հետ կնքված էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:

- Տեխնիկական պայմանների կադրման ժամկետը 1 (մեկ) տարի է:
- Տեխնիկական պայմաններով նշված աշխատանքները իրականացնել համաձայն նախագծի կից ներկայացված կազմակերպության միջոցով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

19 12 2023



Զուր

«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
2023թ.




Տեխնիկական պայման ՎՋ 401 /2023

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, մախագծման)

Մ. Արարատ, հ. Մասիս, գ. Այնթապ,
Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ 14 հող.
/Տարածքի հասցե/

Թամարա Սահակյան
/ամուսնացված/

093527202
/Հեռախոսահամար/



323761

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հրդեհաշիջում
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	Տարածքից մոտ 500մ հեռավորությամբ		
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	d=200մմ, P=0.2 մթն. պող.		
Միացման կետը	Տարածքից մոտ 500մ հեռավորությամբ անցնող ջրագծից		
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի		
Ջրաչափի տրամագիծը,			
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Ջրահեռացման համակարգը բացակայում է, առաջարկվում է կառուցել հերմետիկ հոր սեփականատիրական տարածքում	Տես * կետը
Ջրամատակարարման գրաֆիկը	07.00-23.00		

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀԸԴ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 0.2մթն. է, ապա անհրաժեշտ է նախատեսել ինվերտորային պոմպ:

«Արտաշատ» տեղամասի համակարգող պետ՝ Ս.Թորոսյան
Ինժ. խմբի պատասխանատու՝ Գ. Վարդանյան
Տեխ. պայմանների մասնագետ՝ Հ.Սարգսյան